**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N << ԵՔ-ԳՀԾՁԲ-18/15-1>>**

ք. Երևան                                                                                                    ---26---- դեկտեմբերի 2017

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ, ի դեմս տնօրեն Վ. Սահակյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային սարքերի, էլեկտրական և կենցաղային սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2 326 130 (Երկու միլիոն երեք հարյուր քսանվեց հազար մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

**4.2 Պատվիրատուն, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի (կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից:**

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **8** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքի Նորք-Մարաշ, Շենգավիթ, Աջափնյակ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:**

**7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | Կատարող |
| --- | --- |
| Երևանի քաղաքապետարան | «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք.Երևան, Նոր Նորք 7 զանգ., 26 շ., բն. 12 |
| ՀՎՀՀ 02593108 | <ՎՏԲ-Հայաստան բանկ> ՓԲԸ |
| | Հ/Հ 16048139238100 |
| | ՀՎՀՀ 25316173 |
| Գ.Չերյան------------------------ | Վ. Սահակյան------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |

Հավելված 1
26 դեկտեմբերի 2017թ.կնքված
N «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/15-1» գնման պայմանագրի հավելված

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Համակարգչային սարքերի, էլեկտրական և կենցաղային սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման ***

| հրավերով նախատեսված չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50311120 | Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում<br>Սերվերի օպերացիոն համակարգի և գործիքային ծրագրերի տեղադրում (Win 2008 server/XPprof, server management tools) PROXY, WEB, MAIL, DNS սերվերների տեղադրում և կարգաբերում<br>Համակարգչի նորոգում ներառյալ Cooler, RAM ԴԴՌ400 1024ՄԲ RAM ԴԴՌ3 2048ՄԲ 1333ՄՀՑ, HDD փոխարինում ներառյալ ՀԴ 1000ԳԲ ՍԱՏԱ/7200 Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ 550վ, SVGA փոխարինում ներառյալ 2Գբ ՊիՍիԱյ-Էքսպ | դրամ | 48750 | 25 | | |
| 2 | 50311120 | Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում<br>Brother, Konica Minolta, Samsung, HP, Canon, Lexmark տպիչների վերանորոգում և սպասարկում /ներառյալ թերմոթաղանթի, սնուցման բլոկի, մայրական սալիկի, լազերի, քաշող հարթակի, թմբուկի, մագնիսական լիսեռի, կարատրոնի, մաքրող դանակի, թղթի քաշող հարթակի փոխարինում և քարթրիջի լիցքավորում/ ներառյալ պահեստամասերը, անհրաժեշտության դեպքում նոր քարթրիջով փոխարինում /Լիցքավորված քարթրիջները պետք է տպեն առնվազն 2500 էջ/A4/ անթերի/ | դրամ | 161250 | 125 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 50311120/ | Պատճենահանող սարքի վերանորոգում և սպասարկում<br>Brother, Xerox, Konica, Samsung, HP պատճենահանող սարքերի վերանորոգում և սպասարկում /ներառյալ թերմոթաղանթի, սնուցման բլոկի, մայրական սալիկի, լազերի, քաշող հարթակի, թմբուկի, մագնիսական լիսեռի, կարատրոնի, մաքրող դանակի, թղթի քաշող հարթակի փոխարինում և քարթրիջի լիցքավորում/ ներառյալ պահեստամասերը /Լիցքավորված քարթրիջները պետք է տպեն առնվազն 3000 էջ/A4/ անթերի/ | դրամ | 49500 | 25 | Ա.Արմենակյան 272 | Նախատեսվում է գնել 2018թ. ընթացքում, ընդ որում ծեռքբերման նախընտրելի ժամկետ է սահմանվում Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| 4 | 50311120 | Սերվերների, Համակարգիչների, սկաներների, մոնիտորների և անխափան սնուցման սարքերի սպասարկում և վերանորոգում<br>Սերվերների ընդհանուր սպասարկում, կարգաբերում վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը, Համակարգիչների ծրագրային սպասարկում և վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը (Համակարգչային տեխնիկան հագեցած է հետևյալ պահեստամասերով HDD 1TB, RAM DDR3 4GB 1800 MHZ, սնուցման բլոկ 550W, Mother board H81-K1150 Socket, SVGA Gainward GTX 960 Phantom 4GB 3422, CPU Intel Core i3 4130, DVD-RW)<br>Սկաներների վերանորոգում ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը (HP, Xerox, Canon, Brother),<br>Մոնիտորների վերանորոգում ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը (Samsung 20,5 inch, HP 19 inch, ViewSonic 22 inch, Phillips 23 inch),<br>Անխափան սնուցման սարքերի վերանորոգում ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը (APC 1500, Mercury 650, PowerComp 2000)<br>Ծառայության ընթացքում օգտագործվող բոլոր պահեստամասերի փոխարինումը կատարվում է կատարողի հաշվին: Մատուցման ժամկետը՝ Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 1 աշխատանքային օր անհրաժեշտության դեպքում կատարողի արհեստանոցում, տեղափոխությունը իրականացվում է կատարողի ուժերով:<br>Բոլոր փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված:<br>Պահեստամասերի երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի: | դրամ | 100000 | 100 | Ք. Երևան Գ.Նժդեհի փողոց թիվ 26 | |
| 5 | 50311120 | Քարթրիջների լիցքավորում<br>Կատարողը պետք է իրականացնի (Samsung, Canon, HP, Lexmark, Brother, Kyocera, Konica Minolta, Xerox) քարթրիջների լիցքավորում և վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը (Թմբուկ, Կառատրոն, Ռաքել, Դոզատոր, Մագնիսական գլան, Չիպ, և կորպուս): Ծառայության ընթացքում օգտագործվող բոլոր պահեստամասերի փոխարինումը կատարվում է կատարողի հաշվին: Մատուցման ժամկետը՝ Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 1 աշխատանքային օր անհրաժեշտության դեպքում կատարողի արհեստանոցում, տեղափոխությունը իրականացվում է կատարողի ուժերով: Լիցքավորված քարթրիջները պետք է տպեն առնվազն 2500 էջ/A4/ անթերի: | դրամ | 1115100 | 1260 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 50311120 | Տպիչների վերանորոգում և սպասարկում<br>Կատարողը պետք է իրականացնի (Samsung, Canon, HP, Lexmark, Brother, Kyocera, Konica Minolta, Xerox) տպիչների վերանորոգում պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը (ջերմոժապավեն, ռետինե լիսեռ, ատամնանիվ, վառարան, մայրական սալիկ, թղթի քաշող հարթակի, լազերի և այլն): Մատուցման ժամկետը՝ Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 1 աշխատանքային օր անհրաժեշտության դեպքում կատարողի արհեստանոցում, տեղափոխությունը իրականացվում է կատարողի ուժերով: Բոլոր փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Պահեստամասերի երաշխիքային ժամկետ է սահմանվում 6 ամիս: | դրամ | 220000 | 220 | | |
| 7 | 50311120 | Պատճենահանող սարքերի լիցքավորում, վերանորոգում և սպասարկում<br>Կատարողը պետք է իրականացնի (Samsung, Canon, HP, Lexmark, Brother, Kyocera, Konica Minolta, Xerox) պատճենահանող սարքերի վերանորոգում պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը (ջերմոժապավեն,տեֆլոնե լիսեռ, ֆետրովի լիսեռ, մագնիսական լիսեռ, թմբուկ,կառատրոն, ռաքել,քաշող հարթակ, ռետինե լիսեռ, ատամնանիվ, վառարան, մայրական սալիկ, թղթի քաշող հարթակի, լազերի և այլն) նաև լիցքավորում: Մատուցման ժամկետը՝ Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 1 աշխատանքային օր անհրաժեշտության դեպքում կատարողի արհեստանոցում, տեղափոխությունը իրականացվում է կատարողի ուժերով: Լիցքավորված քարթրիջները պետք է տպեն առնվազն 5000 էջ/A4/ անթերի պահեստամասերի երաշխիքային ժամկետ է սահմանվում 6 ամիս: | դրամ | 50000 | 50 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| 8 | 50311120 | ՀԱՄԱԿԱՐԳԻՉ և ՏՊԻՉ<br>Դիագնոստիկա<br>պրոֆիլակտիկա<br>վերանորոգում<br>օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգաբերում / Win 95/98/2000/XP, Vista MS Offis, acrobat reader, fonts arm / rus, antivirus/, PRAXY, WEB, MAIL, DNS<br>սերվերների տեղադրում և կարգաբերում,<br>վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում,<br>CPU-ի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի,<br>CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ Պ-4 Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ, / Cooler for CPU P4 Intel original/, կամ համարժեքը,<br>համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ համակարգչային պահարան-450 ՎՏ սնուցման բլոկով / With PS 550W/ , կամ համարժեքը,<br>համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ համակարգչային պահարան-550 ՎՏ սնուցման բլոկով / With PS 550W/ , կամ համարժեքը. | դրամ | 124000 | 62 | Արա Սարգսյան<br>5 | |
| 10 | 50311120 | ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔ/6հատ/<br>Դիագնոստիկա,<br>պրոֆիլակտիկա,<br>վերանորոգում/ առանց պահեստամասերի/,<br>լիցքավորում՝ ներառյալ տոները, տոների լիցքավորում | դրամ | 15000 | 15 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | 50311120 | ՏՊԻՉԻ ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ<br>Լազերային տպիչների վերանորոգում և սպասարկում: Պրոֆիլակտիկա, քարթրիջի լիցքավորում, նորոգում, քարթրիջի թմբուկի փոխարինում, մագնիսական գլանի փոխարինում,տպիչի նորոգում: | դրամ | 298000 | 200 | | |
| 13 | 50311120 | ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ<br>Պատճենահանող սարքերի վերանորոգում և սպասարկում: Պրոֆիլակտիկա, քարթրիջի լիցքավորում, նորոգում, քարթրիջի թմբուկի փոխարինում, մագնիսական գլանի փոխարինում, պատճենահանող սարքերի նորոգում: | դրամ | 37250 | 25 | | |
| 14 | 50311120 | ՏՊԻՉԻ ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ(1)<br>Լազերային տպիչների վերանորոգում և սպասարկում: Պրոֆիլակտիկա, քարթրիջի լիցքավորում, նորոգում, քարթրիջի թմբուկի փոխարինում, մագնիսական գլանի փոխարինում,տպիչի նորոգում: | դրամ | 107280 | 72 | | |

ՀՀ դրամ

** Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 1 աշխատանքային օր ընթացքում, անհրաժեշտության դեպքում կատարողի արհեստանոցում, տեղափոխությունը իրականացվում է կատարողի ուժերով.*

**Բոլոր փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Պահեստամասերի երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | Կատարող |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք.Երևան, Նոր Նորք 7 զանգ., 26 շ., բն. 12 |
| ՀՎՀՀ 02593108 | <ՎՏԲ-Հայաստան բանկ> ՓԲԸ |
| | Հ/Հ 16048139238100 |
| | ՀՎՀՀ 25316173 |
| Գ.Չթրյան--------------------------- | Վ. Սահակյան--------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |

Հավելված 3
« » 2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս____________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  2017 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված 9*
*«ԵՔ-ԳՀԾՁԲ-18/15-1» ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
## (պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան 26 դեկտեմբերի 2017

«Վարազդատ Սահակյան» Ա/Ձ, ի դեմս տնօրեն Վ. Սահակյանի, /Ն/ք՝ 000510065, տրված 11.02.2013թ., 005-ի կողմից/ որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարան (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված **ԵՔ-ԳՀԾՁԲ-18/15-1** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 1. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Վարազդատ Սահակյան» Ա/Ձ
ք.Երևան, Նոր Նորք 7 զանգ., 26 շ., բն. 12
<ՎՏԲ-Հայաստան բանկ> ՓԲԸ
Հ/Հ 16048139238100
ՀՎՀՀ 25316173

Վ. Սահակյան-------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ

4. Վճարողի բանկը՝ <ՎՏԲ-Հայաստան բանկ> ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 16048139238100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 25316173

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12. Գումարը թվերով և բառերով՝ **232613** (Երկու հարյուր երեսուներկու հազար վեց հարյուր տասներեք) ՀՀ դրամ

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝*(պայմանագրի կատարման ապահովում)*

15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝<<ԵՔ-ԳՀԾՁԲ-18/15-1>>

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /___________________/ /___________________/ | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /___________________/ /___________________/ |
| 19.բ. Կ.Տ. | 18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից | Կատարված է վճարողի բանկի կողմից |
| 20.ա. /___________________/ /ստորագրություն/ | 21.ա. /___________________/ /ստորագրություն/ |
| 20.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ. |
| "___" ___ 20___ թ. | 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

[1] Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: